

Արտատպված է՝ Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատոր IV, Ե., 1978:

ՄԻՏԻՆԳ ԱՐԱՔՍԻ ԱՓԻՆ

Միտինգի նախագահ Ատոմը ճառել էր, պրծել: Այժմ խոսում էր տեղկոմի քարտուղար Միսակը, որ վերջացնելու վրա էր:

Բացատրեց մայիսի մեկի նշանակությունը համաշխարհային պրոլետարիատի համար և ձեռք մեկնելով պատի տակի բահերի կույտին, շեշտեց, որ Հոդժողկոմատը՝ ամեն ջանք գործ դնելով նոր գյուղի կառուցման ավարտման համար, ահա մայիս մեկի նվեր է ուղարկել այս հարյուր բահը՝ «բարձրացնելու մեր երկրի շինարարությունը»:

Նրան միահամուռ ծափահարեց պատի շվաքում նստած միտինգավոր հասարակությունը՝ մի հարյուր հոգի հայ գաղթական:

Դրանք Իզմիրի, Ատաբազարի կողմերից գաղթած հողագործ, տնայնագործ գյուղացիներ էին՝ մրագույն, թավ հոնքերով և չածիլած կզակների վրա կախ լոշտակ հաստ բեխերով: Նրանք իրար կպած՝ շարվել էին դպրոցից դուրս բերած երկար նստարանների վրա:

Միսակը քրտինքը սրբեց և նստելով պստիկ սեղանի ետև, Ատոմի կողքին՝ կպավ նրան: Սկսվեց խորհրդակցություն հետևյալ ճառախոսի առթիվ:

Բայց հետևյալ ճառախոսը արդեն տրորվում էր ոտների վրա և գոտիկը ուղղում: Դա սահմանապահ ռուս կարմիրբանակային էր:

Ատոմը հայտարարեց խոսողի անունը և ուժեղ ծափահարեց: Ծափահարեց և Միսակը, որին հետևեցին միտինգավորները:

Բանակայինը՝ մի կենսուրախ հեծելագոր, փայտե սանդուղդճռռացնելով բարձրացավ անճաղ պատշգամբ, գդակը կոտրեց դեպի ծոծրակը, գլուխն ընդոստ թափով վերցրեց և խոպոպները ցանելով խիզախ ճակատին՝ սկսեց իր ճառը ռուսերեն լեզվով:

— Ընկերներ, դուք հիմնադրում եք ձեր գյուղը մեր բոլորի սոցիալիստական հայրենիքում, աշխատավորների հայրենիքում:

Ու շարունակեց այսպես...

Նստածները ավելի քան լուրջ դեմք ընդունեցին և խաղաղ հավատավորի միամիտ աչքերով՝ նայեցին հռետորին:

Դաշտի մեջ նորաշեն տնակներ, դեռ հում պատերով, այլև ավեր գյուղի խրճիթներ՝ կարկատաններով աշխուժացած, ապա և հին այգու հողե պարիսպի մոտ մի մեծ վրան՝ թևատարած հովանավորությունը գաղթական կյանքի վերջին կայանի վրա, սուս ու փուս շրջակայք—ահա տեսարանը:

Կարմիրբանակայինը, որը ո՞վ գիտե ի՞նչի էր եկել այստեղ,— զոդմա՞ն համար, թե՞ (և ի՞նչ նշանակություն ունի) պատահաբար անցնելիս նորաբնակների միտինգը տեսել և խանդաղատվելով՝ սիրտն ուզել էր մի ջերմ խոսք ասել սրանց: Սկսեց բացատրել Մայիս մեկի նշանակությունը համաշխարհային պրոլետարիատի համար և նրա հետ կապեց բոլոր այլ նշանակությունները:

Նրա թարմ, հափշտակված դեմքը, տղամարդու կեցվածքը, կտրիճ մարտիկի թեթև թաշախուստը մարդու աչքին մի դուրալի աշխույժ էին բերում:

Նա շառագունել էր խնձորի պես և սլացիկ հասակը թեքելով առաջ՝ ծավալում էր իր ճառը:

Նա կոչ էր անում միտինգավոր բազմությանը— հարյուր հոգուն— զգուշանալ համաշխարհային բուրժուազիայի նենգ դիտումներից... տազնապ զցելով նրանց մեջ, որ պատրաստ լինեն կռվի, որովհետև «համաշխարհային իժերը» չեն քնած և հիմա փորում են «աշխատավորների տակի հողը»:

Նա ոգևորված էր:

Բայց ճառն, ըստ երևույթին, լավ չէր ենթարկվում նրան: Երևում էր որ նրան ավելի սազում էր մորիկի սլացքը իր կատաղի ձիու մեջքին՝ քաղաքացիական կռվի բովում, քան թե հռետորականարվեստի խարդախ ճարտարություններն ու քերականի սատանական խրթնագծերը:

— Այսպես, ընկերներ, մենք թույլ չենք տա, որ կապիտալը մեզ գցի իր լծի տակ. մենք նրա գիշատիչ ախորժակի դեմ կը ցցենք մեր պրոլետարական սվինը...

Հետո անցավ ինդուստրացման:

Բայց, ըստ երևույթին՝ այստեղ էլ մի փոքր սխալվել էր իր հաշիվների մեջ: Ոչ ոք չուներեն չէր հասկանում, ոչ ատաբազարցի, իզմիրցի այդ հողագործները և ոչ էլ նրանց նախագահ Ատոմը: Միսակը միայն, իբրև ղամարվեցի, բնիկ՝ քիչ միջ հասկանում էր— այսինքն գիտեր, թե նա ինչ կլիներ ասելիս և գլխով հավանության նշաններ էր անում:

Ուրեմն ի՞նչ կարելի էր հասկանալ գաղթականներին անծանոթ լեզվով:

Բայց ի՞նչ նշանակություն ուներ... Ահա կարմիրբանակայինի կրակված պատանեկան դեմքը, անկեղծ ոգևորությունը: Ահա բահերի կույտը, հիմնվող գյուղի տնակները, խաղաղության մեջ ծաղկող սալորենիները, նշենիները, դաշտերում դեղնակարմիր ծիլերը— երեկվա հերկը: Հողի բուրմունքը, աշխատանքի հետքերը,— բնագդական լեզուն, ներքին միջազգային լեզուն, որ փոխադարձ հասկանալի էր այդ այլազգի աշխատավորներին:

— Ի՞նչ կըսե, փսփսաց մի գաղթական իր կողքին կպած մի ուրիշ խստադեմ ունկնդրի, որ աչքերը գամել էր հռետորի վրա:

— Մայիսի մեկն է— համարյա բարկացած մոմռաց խստադեմը,— թշնամիներուն բերանը պիտի պատռենք. գեղը պիտի շինենք, կըսե, աշխարհիս մեջ աշխատավորներս մեկ պիտի ըլլանք, կըսե:

— Եա՛, աղեկ կըսե,— խրոխտաց առաջինը:

Ունկնդիրներն անխոս լսում էին: Նրանց գրավել էր հռետորի շիտակ, անկեղծ ծայրը: Երևում էր որ նա՝ աշխատավոր դասակարգի զավակ՝ շատ պատմություններ գիտեր, եկել էր Արաքսի կրակոտ ափերից, պատմում էր և պատրաստ էր պատմելու «աշխարհիս բոլոր աշխատավորներին»: Նրան լսում էին այդ հողագործները, մի քիչ հեռու կանգնած կանայք և միտինգի շուրջը ճանճերի պես լցված մանր ու խոշոր երեխաները: Անգամ կավագույն շունը, որ գլուխը դրել առջևի թաթերի վրա նիրհում էր, զարթնեց, երբ բանակայինը գոռաց:

— Մենք կասենք նրանց. «Ձեռներդ հեռու մեր սոցիալիստական հայրենիքից»:

Նա պոչը շարժեց և վեր նայելով միտինգի կողմը՝ խելացի աչքերը զցեց խոսողի վրա և սկսեց լեզուն կախ՝ հեթեթալ:

— Մյուս անգամ մենք առիթ կունենանք խոսելու սոցիալիզմի կառուցման մասին: Իսկ այժմ հայտարարենք, որ մենք միասին կպաշտպանենք մեր սոցիալիստական հայրենիքը: Կեցցե՛ Մայիս մեկի տոնը, կեցցե՛ համաշխարհային պրոլետարիատը:

Ամենից առաջ ծայրեց Միսակի ծափահարությունը, որին հետևեց միտինգավորների ծափահարությունը:

Կարմիրբանակայինը լռեց և քրտնամխած, հեռավոր վազեց ներքև: Գաղթականները ժպտալով տեղ բացին նրան իրենց կողքին:

Նստեց: Երջանիկ էր նա— գոհ միանգամայն: Սրտանց ուզել էր խոսել:

Առաջ եկավ Միսակը և հազալով սկսեց թարգմանել ճառը՝ որ Մայիս մեկը բոլոր երկրների բանվորների և գյուղացիների տոնն է, որ գաղթականները պետք է կռվեն իրենց դասակարգի թշնամիների դեմ:

Հետո սկսեց մի քիչ էլ իրենից շարադրել, որ Հողժողովմատը շուտով ուղարկելու է սերմացու, շինանյութ՝ սոցիալիստական հայրենիքի շինարարությունը բարձրացնելու համար:

Թարգմանությունը ևս փակվեց բռնուն ծափահարություններով:

Բոլորն ուրախացան: Ավելի ուրախ էր կարմիրբանակայինը: Նա քրտնաթոր դեմքը դարձրեց ետ, նայեց միտինգավորների աչքերին— հոգու աչքերին— ստուգեց տպավորությունը և զգաց, որ նրանք իրեն շատ լավ հասկացել են, և հարցրեց.

— Այդպես է, չէ՞:

Նրանք գլխով արին, ժպտացին և բացականչեցին:

Բանակայինը նստեց մինչև միտինգի վերջը:

Միտինգը վերջացավ:

Գաղթականները խոնվեցին իրար: Մի մեծ խումբ էլ եկավ պաշարեց կարմիրբանակայինին: Սա ժպտաց և նայեց նրանց: Նրանք էլ ժպտացին և նայեցին սրան:

Չեն իմանում ի՞նչ ասեն:

Բայց մի քանիսներն էլ հանդիսավոր, լուրջ բեխերը մինչև վզները կախած, սաստիկ կենտրոնացած հայացքները հառեցին կարմիրբանակայինին:

— Նո՛ւ, շտո՛, խարաշո՛ վամ (հե՛, ի՞նչ կա, լա՛վ եք), հարցրեց կարմիրբանակայինը, պայծառ աչքերը պտտեցնելով մեկի դեմքին, մյուսի զգեստին, չորրորդի ոտներին:

Ու նորից ժպտաց բաց-սիրտ, ատամների ցլլքը բերանում:

— Ամենքս ալ աշխատավոր ենք, ընկե՛ր,— բացատրեց հանգամանորեն մի թանձրաբեխ, մկանուտ գաղթական, որի դեմքին խորը կնիք էր դրած մի քառասուն տարվա անդուլ աշխատանք հողի ու արհեստի մեջ:— Հողագործ ենք, մասնագիտությամբ ծխախոտ կմշակենք:

— Եվ մետաքս, ավելցուր, տե՛ — նկատեցին ետևից:

— Եվ մետաքս,— ավելցրեց հասակավորը ճեմարանական լրջությամբ... թող որ բարձր մշակույթի ամեն ճյուղերեն սկսած՝ մինչև բանջարանոցի գործերը, ամենուն ալ մասնագետը կգտնվի մեջներս...

Կարմիրբանակայինը, որ ոչ մի բառ չհասկացավ՝ գլխով հավանության նշան արեց:

— Հանգամանորեն ըսելու ըլլանք նե՛ մեր մեջ ամեն տեսակ արհեստավոր ալ կա: Ես ինքս հյուսն եմ:

— Ջանըմ, հյուսն ալ կա, փականագործ ալ կա, ամեն արհեստն ալ կա, իշտե,— վրա բերին մյուսները:

— Միևնակ թե դեռ անծանոթ ենք վայրին, քիչ մըն ալ անվարժ ենք տեղական բարքերուն:

— Կվարժվինք, հոգ չէ:

— Ատանկ է, եմ՛:

— Հասկըցուցեք իրեն, որ ամենքս ալ սոցիալիստական գործին պիտի նվիրենք ինքզինքնիս:

— Ատանկ է, եա՛, ալ ինչո՞ւ համար եկանք իսս:

Կարմիրբանակայինը լսում էր այնպես լուրջ, կարծես հասկանում էր այս ամենը:

Հետո մի շարժում արեց.

— Ա սկո՞լկո ու վաս դուշ (քանի՞ հոգի եք),— հարցրեց:

— Ի՛նչ կըսե, Ատոմ — դիմեցին գաղթականները Ատոմին, որ մոտեցել էր սրանց, Միսակին ճամփու ղեկուց հետո:

Ատոմը չկոտրվեց:

— Կհարցնե, թե գո՞հ եք ձեր վիճակեն:

— Գոհ ենք, գոհ, վրա բերին գաղթականները:

Կարմիրբանակայինը կոտրած ժպիտով նայեց նրանց և ինքնիրան խոսեց.

— Ափսոս, չեմ հասկանում: «Գոհ», զնաչիդ սկո՞լկո («գոհ» կը նշանակե որքա՞ն)... նու, ինչ որ է...

— Գոհ չըլլանք նե՛՝ ի՛նչ պահանջելու իրավունք կրնանք ունենալ, խոսեց հասակավորը, պիտի աշխատինք, տե: Հիմակ ու հիմա ամեն բան դժվար կուգա մեզի, ետքը, մեկ տարիեն ամեն բան կը շտկվի:

— Ջանըմ, տուն ունինք, հող ունինք, սերմ ունինք, գործիք ունինք, ինչո՞ւ ալ չշտկվի: Իրեն ըսե, որ ամենքս ալ մեկ հոգի, մեկ սիրտ եղած ենք և երդում ըրած ենք մեր գյուղը շինելու և գործին առաջադիմության համար աշխատելու:

Ատոմը կրկնեց նույնը հայերեն:

— Պանիմայու, պանիմայու (հասկանում եմ),— գոչեց կարմիրբանակայինը, այսինքն բառերը չեմ հասկանում, բայց միտքը զլխի եմ ընկնում: Ընկերներ, մենք պիտի աշխատենք. այստեղ կազմվում է մի աշխատավոր բանակ:

— Ի՛նչ կըսե:

— Կըսե՛՝ ձեր գործին ամեն մանրամասնության մեջ ճշմարիտ սրտով պիտի նվիրվիք:

— Է, ինչե՞ն հասկցար, թե ատ կըսե,— կասկածով ժպտաց մի երիտասարդ, որ քթի տակին մի չարածճի բան ուներ:

— Է, եա՛, ես անանկ հասկըցա,— գոչեց Ատոմը քիչ վիրավորված:

Այդ ժամանակ մի պատանի ներս խորեց իր գանգրահեր, ածխագույն գլուխը ու շիտակ եկավ կանգնեց կարմիրբանակայինի առջև: Ապա ծոցից հանեց լրագրի մի կտրոն՝ Լենինի պատկերով:

— Ասիկա մեր առաջնորդն է,— ցույց տվեց մատով ու նայեց կարմիրբանակայինին:

Այս անիստ ժպիտը փոխվեց խոսուն ծիծաղի, որ հասկանալի բառի պես բացականչեց.

— Այո Լենինն է, մեծ առաջնորդը,— ասաց նա,— այ հիմի՛ իրար հասկացանք կատարելապես:

— Լենի՛նը, Լենի՛նը, հիմա հասկցանք, ալ լմնցավ, ծիծաղեցին շրջապատողները և մտերմաբար նայեցին կարմիրբանակայինին:

Մայրենի լեզուն հնչել էր արդեն:

— Վո՛ւտ էտո ի՛ պա ռուսկի, ի՛ պա արմեանսկի, ի պա վսեմո՛ւ (ա՛յ, սա և՛ ռուսերեն է, և՛ հայերեն է, և՛ ամեն լեզվով), ասաց կարմիրբանակայինը,— էտո ինտերնացիոնալ:

— Ինտերնացիոնա՛լ, ինտերնացիոնա՛լ,— գոչեցին երիտասարդները և գրկեցին կարմիրբանակայինին:

— Նո՛ւ, ընկերներ, ես գնացի, վերջացրեց գրույցը կարմիրբանակայինը և վճռական տոնով՝ երկաթե մատները խճճեց աշխատավոր գաղթականների կոշտ ձեռքերին,— մնա՛ք բարով:

— Գնա՛ս բարով, ընկեր,— ծայն տվին գաղթականները:

— Շուտ-շուտ եկո՛ւր մեզ մոտ:

— Ատո՛մ, ըսե՛ մեզի չմոռնա:

Ատոմն ասաց.

— Խարաշո՛, խարաշո՛... հասկացավ կարմիրբանակայինը նրանց կանչող ձեռքերի իմաստը: Կգա՛մ, կգա՛մ...

Մի լուռ գաղթական, որ ամբողջ ժամանակ անշարժ գամված էր տեղում և ինչ-որ ներքին հուզմունքով ունկնդրում էր, առաջ ընկավ ու կանգնեց կարմիրբանակայինի դեմ: Հետո, մատը տրագիկ շարժումով ցցեց ու խուլ ձայնով ասաց.

— Վերջին ամեն բան աղեկ պիտի ըլլա:

— Խարաշո, խարաշո,— հանգստացրեց կարմիրբանակայինը:

Կարմիրբանակայինը ձեռքը գլխարկին տարավ, զինվորական պատիվ տվեց գաղթականներին ու խթանները զնգզնագցնելով՝ մոտեցավ իր եռուն երիվարին, որ հողն էր փորում սմբակներով: Հետո ոտը դրեց ասպանդակին, զսպանակի պես թռավ նստեց: Մի րոպե ևս, և նա սուրաց խճուղու վրայով:

ՄԻՏԻՆԳ ԱՐԱՔՍԻ ԱՓԻՆ

(Էջ 134)

Առաջին անգամ տպագրվել է ՀՕԿ (օրգան Հայաստանի օգնության կոմիտեի), Փարիզ, 1933, № 4, էջ 26—31: Ինքնագիրը չի պահպանվել: Տպագրվում է նույնից: